

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԼԵԶՎԻ ԶԱՐԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ

Ս. Հ. ՀԱՅԹՅԱՆ

ԳՊՀ ԲՖ օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս

Մ. Մ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

*ԳՊՀ ԲՖ անգլերեն լեզվի և գրականության բաժնի 3-րդ կուրսի
ուսանողուհի*

Ժամանակակից աշխարհում հաղորդակցության և կապի զարգացման հետ մեկտեղ անհրաժեշտություն է առաջանում միևնույն բառը, տեքստը թարգմանել տարբեր լեզուներով, տարբեր լեզվակիր մարդկանց հաղորդակից դարձնել միևնույն գաղափարին: Մենք կարևորում ենք թարգմանության դերը լեզվի զարգացման գործում՝ այն համարելով լեզվի զարգացման արդյունավետ միջոց: Օտար լեզվի ուսուցման միջոցով հնարավոր է դառնում առնչվել օտար մշակույթին, համեմատության եզրեր անցկացնելով մայրենի լեզվի հետ՝ զարգացնել դիտողականությունը և բառապաշարը: Թարգմանության միջոցով օտար լեզվի ուսուցումը մի շարք խնդիրներ է լուծում:

Ճիշտ և գրագետ թարգմանություններ կատարելը պահանջում է լեզուների լավ իմացություն: Թարգմանություններ կատարելով՝ բոլոր սովորողներն էլ բախվում են այս կամ այն դժվարություններին, որոնց լուծումը ինքնին բերում է լեզվի զարգացմանը: Նրանք առնչվում են լեզվի տարբեր բաժիններին՝ սկսած բառագիտությունից մինչև շարահյուսություն և այլն: Թարգմանությունն իրենից ենթադրում է նույն գաղափարի ճշգրիտ վերարտադրումը այլ լեզվով: Նշենք, որ ոչ բոլոր լեզուների բառաֆոնդն է հավասար չափով զարգացած, և ոչ բոլոր լեզուները ունեն արտահայտչական միևնույն միջոցները, ուստի, թարգմանություն անելիս սովորողը բախվում մի շարք խնդիրների: Տարբեր լեզուներ ուսումնասիրելիս նա առնչվում է տարբեր մշակույթների, կենցաղի և բառաֆոնդի հետ, և հաճախ անհրաժեշտություն է առաջանում սեփական լեզվի մեջ ներմուծել բառ, որի հասկացությունը նախկինում չկար: Այսպիսով, այս ամենը տանում է նոր բառերի ստեղծմանը, բառաֆոնդի համալրմանը, ինչը, իհարկե, լեզվի զարգացման համար արդյունավետ միջոց է: Նույնը կարող ենք ասել նաև թե՛ բժշկական, թե՛ տեխնիկական տերմինաբանության մասին: Տարբեր ոլորտներում օրեցօր ավելանում է

տերմինների քանակը, ինչը պայամավորված է նորանոր երևույթների բացահայտմամբ և ստեղծմամբ, ուստի անհրաժեշտ է նման տերմինները թարգմանել կամ փոխառել մյուս լեզուներում ևս, որն էլ տանում է արդեն լեզվի զարգացմանը: Լեզվի մեջ նոր բառերի փոխառման կամ նոր բառերի ստեղծման արդյունքում տարեցտարի համալրվում են բառարանները, այստեղից կարելի է հետևություն անել, որ թարգմանությունները նպաստում են նաև բառարանագրության զարգացմանը:

Թարգմանություններ կատարելը նպաստում է ստուգաբանության զարգացմանը: Հատկապես նույն լեզվաընտանիքի լեզուների միջև թարգմանություններ կատարելիս լեզուների կամ լեզվական միավորների միջև եղած նմանությունները ավելի ակնհայտ են դառնում: Թարգմանության ժամանակ նմանությունը դիտարկելով՝ կարելի է կատարել հետազոտություն՝ տվյալ միավորների ծագումնաբանական ընդհանրությունը գտնելու համար:

Թարգմանություններ կատարելը նպաստում է լեզվամտածողության զարգացմանը: Վերոնշյալը կապված է ոչ միայն մայրենի լեզվի, այլ նաև թարգմանվող լեզվի հետ: Յուրաքանչյուր թարգմանիչ պետք է ունենա, այսպես կոչված, «լեզվական հոտառություն», որպեսզի արտահայտությունը ճիշտ թարգմանի, այլապես քիչ չեն դեպքերը, երբ թարգմանված տեքստը դառնում է տվյալ լեզվում վիրավորական, կոպիտ հնչող նյութ, կամ անհասկանալի է տվյալ լեզվակրի համար: Նման օրինակների շատ ենք հանդիպում դարձվածքների թարգմանության ժամանակ: Օրինակ՝ հայերենում «**ականջիդ օղ արա**», ռուսերենում «**заруби на носу**», գերմաներենում «**Schreibt dir das hinter die Ohren**», որը բառացի թարգմանությամբ նշանակում է «**գրիր ականջիդ հետևում**», կամ ռուսերենում «**сыр в масле**» գերմաներենում «**Alles in Butter**» բառացի թարգմանությամբ նշանակում է «**ամեն ինչ կարագի մեջ է**», իսկ հայերենում՝ «**ամեն ինչ հիանալի է**»:

Թարգմանությունները օգնում են բացահայտել բառի բազմիմաստությունը: Օրինակ՝ «**Золотая пора**» նշանակում է «կյանքի լավագույն ժամանակահատված կամ աշուն», «**Золотой мой**» «թանկագինս», կամ «**Золотой век**» «ոսկե դար, նախնադարյան հասարակության երջանիկ ու անհոգ կացության վերաբերյալ առասպելական պատկերացում անտիկ աշխարհում կամ մշակույթի

զարթոնք» գերմաներենում «**das Goldene Zeitalter**», որը նույնպես ունի երկու իմաստ՝ **eine glückliche Zeit, wo die Menschen sorglos ohne Arbeit und Weh dahinlebten wie die Götter, und der Acker von selbst Frucht trug** 2. **Blütezeit der Kunst und der Wissenschaft in der Geschichte eines Volkes.**

Թարգմանությունը նպաստում է, որ մեր լեզվամտածողության մեջ ամրապնդվեն այս կամ այն բառի իմաստային շերտերը, ինչը կնպաստի այդ շերտերի հետագա ճիշտ կիրառմանը:

Բոլոր լեզուներում էլ կան դիպվածային բառեր, որոնք հասկանալի են միայն տվյալ համատեքստում կամ տվյալ ժամանակահատվածում: Յուրաքանչյուր անհատ իր խոսքային գործունեության ընթացքում վերարտադրում է իր իմացած բառերը, որոնք բազմիցս օգտագործել են ինքը և նույն լեզվի կրողները: Այսպիսով, լեզվի բառապաշարը մշտապես վերարտադրվում է տվյալ լեզուն կրող հասարակության անդամների կողմից տարբեր կապակցություններում և փոխանցվում է սերնդեսերունդ: Սակայն պատահում է այնպես, որ խոսքային գործունեության ժամանակ, ձգտելով հասնելու բարձր արտահայտչականության, խոսողը խախտում է բառակազմության նորմաները, տվյալ իրադրության, լեզվական համատեքստի թելադրանքով ստեղծում նոր բառեր կամ բառակապակցություններ, որոնք, չհակասելով լեզվի ընդհանուր համակարգին և չմոռնելով լեզվի բառապաշարի մեջ, հանդես են գալիս որպես որոշ տեսակի նորաբանություններ, ոչ կանոնական լեզվական միավորներ, որոնց արժեքը պայմանավորված է միմիայն տվյալ համատեքստով: Այդպիսի բառերը լեզվաբանության մեջ արժանացել են ուշադրության և ստացել «դիպվածային բառ» անվանումը, այսինքն՝ բառ, որը գրողի կամ խոսողի կողմից օգտագործվում է մեկ անգամ, տվյալ դեպքի համար:

Օր.՝ «**чайник**» բառը հայերենում նշանակում է «**թեյնիկ**», սակայն ռուսերեն խոսակցական բառաշերտում այն ձեռք է բերել նոր իմաստ՝ նշանակելով նաև «**неумелый, малоопытный человек, плохо разбирающийся в своем деле, а также вообще глупый, неумный человек**»:

Թարգմանության տեսակետից առանձնանում է ածանցավոր բառերի թարգմանությունը: Դրանց մի մասը ունի իր

համարժեքը, սակայն կան այնպիսի ածանցավոր բառեր, որոնք անթարգմանելի են:

Օրինակ՝ **день-денек** բառազույգը թարգմանում ենք հայերենում «**օր**», «**денек**» փոքացուցիչ վերջածանցով բառը համարժեք չունի հայերենում, գերմաներենում «Tag», նույն բառը փոքրացուցիչ մասնիկով թարգմանվում է որպես «**Tagchen!**» «Ողջույն,բարև», «**Доброго здорovieчка!**», իսկ եթե ցանկանանք փոքրացուցիչ մասնիկի իմաստը շեշտել, պետք է դիմենք բառակապակցությունների օգնությանը:

Եթե քննարկենք թարգմանության դերը դեղուկտիվ մեթոդով, այսինքն՝ ընդհանուրից գանք դեպի մասնավորը, պետք է նշենք՝ թարգմանության ցանկացած տեսակ իր խորը ազդեցությունն ունի անհատի լեզվական հմտությունների զարգացման վրա: Թե՛ բանավոր, թե՛ գրավոր թարգմանությունը պահանջում է որոշակի մտածողություն, ինչը սերտ կապված է խոսքային կամ լեզվական որոշակի հմտությունների հետ: Բանավոր թարգմանությունները նպաստում են մտածողության ինտենսիվացմանը, այսինքն՝ ընկալումն ու արտաբերումը լինում են շատ արագ, հաշված վայրկյանների ընթացքում, ուստի թարգմանության այս տեսակը զարգացնում է արագ լեզվամտածողությունը:

Գրավոր թարգմանություններն ավելի հղկված են և զարգացնում են անհատի սեփական լեզվական կարողությունները՝ բառապաշար, արտահայտչամիջոցներ և այլն:

Թարգմանություններն օգնում են, որ լեզվում առկա մի շարք բառեր, որոնք ուղղակի գրված են որևէ բառարանում և գտնվում են պասիվ բառապաշարի մեջ, դրվեն կիրառության մեջ: Առաջինը՝ որքան շատ ես թարգմանում, այնքան հմուտ ես դառնում այս հարցում:

Տպագիր տեքստից թարգմանելիս սովորողները նախ վարժվում են տվյալ լեզվի տառատեսակներին, այնուհետև ուշադրություն են դարձնում այդ լեզվի ուղղագրությանն ու բառապաշարին, աստիճանաբար ընկալում են օտար լեզվամտածողությունը՝ ակամա համեմատելով մայրենի լեզվի հետ: Նրանք համեմատում են ոչ միայն բառապաշարն ու շարահյուսական կառույցները, այլև խորանում են խոսքի ոճի մեջ, թարգմանության ժամանակ կատարում են խոսքային շերտի համապատասխանեցում: Ուրեմն թարգմանությամբ օտար լեզվից սովորում են կարդալ, լսելով հասկանալ, հիշել ուղղագրական

ամենագործածական կանոնները, ընկալել տվյալ լեզվի առոգանությունն ու արտաբերել այն: Սակայն կասկած չկա, որ թարգմանությունը խորացնում է նաև մայրենի լեզվի իմացությունը, յուրօրինակ ձևով մշակում խոսքը:

Թարգմանության ժամանակ սկսվում է հոմանիշների փնտրտուքը, խոսքի ոճն ապահովող շարահյուսական կառույցների ընտրությունը, բառախաղերը, դարձվածքներն ու ասացվածքները ոչ թե նույնությամբ, այլ համապատասխան միավորներով թարգմանելու ոչ հեշտ, բայց շատ հետաքրքիր աշխատանքը: Իհարկե, դա ավելի բարդ է, քան առանձին բառերի և արտահայտությունների «ճիշտ» թարգմանությունը: Շատ դեպքերում անգամ ճիշտ թարգմանված բառը կարող է ոչինչ չասել ընթերցողին, քանի որ ընթերցվող տեքստի իմաստավորման աշխատանքը պահանջում է շատ ավելի ընդարձակ մշակութային համատեքստ, և անհասկանալի տեքստը ավելի շատ համապատասխան գիտելիքի բացակայության, համատեքստի չիմացության արդյունք է:

Յուրաքանչյուր բառ պետք է արժանանա առանձնահատուկ ուշադրության թե՛ համատեքստում, թե՛ դրանից դուրս, քանի որ բառերն ունեն ուղիղ իմաստ, փոխաբերական իմաստ, տեխնիկական իմաստ և այլն: Ըստ այդմ՝ առանձնացվում են թարգմանության հետևյալ տեսակները.

1. Բառացի թարգմանություն, որը ձգտում է բնագիրը բառ առ բառ վերարտադրել երկրորդ լեզվի նույնիմաստ բառերով, պահպանել բնագրի շարահյուսական և այլ լեզվական կառույցները այնքան ժամանակ, քանի դեռ դրանք չեն խախտի բնագրի իմաստային ճշգրտությունը և հստակությունը: Եթե որևէ բառ գոյություն չունի երկրորդ լեզվում, ապա բառը չի թարգմանվում, այլ բերվում է նույնությամբ: Բառի համարժեքը ստեղծվում է՝ ելնելով երկրորդ լեզվի բառապաշարից և բառակերտման կանոններից, օր.՝ հեռախոս, հանրակառք: Բառացի թարգմանությունը խրախուսելի և անհրաժեշտ է հատկապես գիտական և վարչագործարարական և բժշկական տեքստերի թարգմանության մեջ, որոնց լեզուն խիստ կոդավորված է և պահանջում է ճշգրտություն:

2. Ստեղծագործական թարգմանությունը, հնարավորինս հետևելով բառացի թարգմանության վերոհիշյալ սկզբունքին, մի շարք նկատառումներով ենթադրում է նաև որոշ շեղումներ բնագրից: Ըստ այդմ՝ ստեղծագործական թարգմանությունը կոչվում է նաև ազատ

թարգմանություն, փոխադրություն, նմանություն: Ստեղծագործական թարգմանության նպատակն է ստեղծել երկրորդ լեզվի լեզվամտածողությանը հարազատ տեքստ, այնպիսին, որ, ինչպես ասում են, չզգացվի տեքստի թարգմանված լինելը:

Ստեղծագործական թարգմանությունը խրախուսելի և անխուսափելի է գեղարվեստական տեքստերի պարագայում հենց այն պատճառով, որ այդ տեքստերի լեզուն այլ լեզվաոճական ձևերի համեմատությամբ խիստ անհատականացված է և նվազ չափով է ենթարկվում ընդհանուր կոդավորումների: Այլ խոսքով, այստեղ դրվում է անհատական ոճի խնդիրը:

Քանզի յուրաքանչյուր իմաստակիր ձև ենթադրում է որոշակի բովանդակություն և ընդհակառակը, որոնք անհնար է անջատել միմյանցից, ուստի անհնար է կատարել տեքստի բացարձակապես ճշգրիտ թարգմանություն, հատկապես գեղարվեստական գրականության մեջ:

Եթե գիտությունը, պաշտոնական հաստատությունները, մեծ չափով նաև հրապարակախոսությունը ձգտում են բառերի իմաստի բացարձակ ճշգրտման և վերացարկման, ապա գեղարվեստական գրականությունն այն բնագավառն է, որտեղ բառերը և բառակապակցությունները ներկայանում են իրենց ամբողջ կենսագրությամբ, որը չափվում է հազարամյակներով:

Յուրաքանչյուր գրական ստեղծագործություն հաղթահարում է լեզվի և նրանով ստեղծված նախկին գլուխգործոցների, դրանց ծնունդ տվող օրենքների սահմանափակությունը՝ ստեղծելով ազատության և անսահմանության պատրանք:

Այսօր օտար լեզվի դասավանդման հիմնական խնդիրներից է սովորողի խոսակցական լեզվի, օտար լեզվով շփվելու, բանավոր խոսքի ընկալման հմտությունների ձևավորումն ու զարգացումը, իսկ դրան հասնելու լավագույն միջոցներից մեկը թարգմանությունն է, որը պետք է դիտարկվի իբրև գործնական առարկայի դասավանդման խնդիր: Այսօր, ի տարբերություն ոչ հեռու անցյալի, թե՛ ուսանողը, թե՛ դասավանդողը ավելի շատ հնարավորություններ ունեն ուսուցման ճիշտ մեթոդներ ընտրելու հարցում՝ այս ասպարեզում հաջողության հասնելու համար:

Բանալի բառեր՝ թարգմանություն, տեքստ, դարձվածքներ, դիպվածային բառեր, համատեքստ, հոմանիշ, բառապաշար, բանավոր թարգմանություն, բառի բազմիմաստություն:

Օգտագործված գրականություն

1. **Гавриленко Н.**, Обучение переводу в сфере профессиональной коммуникации, М., РУДН, 2008.
2. **Емельянова Я.**, Лингвострановедческая компетенция переводчика: теория и практика: Монография / Я.Б. Емельянова. 2-е изд., испр. и доп, Нижний Новгород, ООО “Стимул-СТ”, 2010.
3. **Тамирогян К.**, Материалы II Международной научно-практической конференции преподавателей русского языка Армении, России и других стран СНГ. “Русский язык – гарант диалога культур, научного сотрудничества, межличностного и межнационального общения в XXI веке”, Ванадзор, “Велас принт”, 2011 год, 766 стр. Стр. 622-633.
4. Рецкер Я.И., Теория перевода и переводческая практика
5. Ахманова О.С., Словарь лингвистических терминов, М., Советская энциклопедия, 1966.
6. Հայ գրողները գեղարվեստական թարգմանության մասին, խմբ. Մաքսապետյան Մ.Վ., Երևան, 1985:
7. Գաբրիելյան Ա., Թարգմանաբանության քրեստոմատիա, Երևան, Սահակ Պարթև, 2007:
8. Թ.Ղարաբուլյան « Լեզվական տարբերակները և դրանց գնահատումը» Երևան, 1980 էջ 197

TRANSLATION AS AN EFFECTIVE METHOD FOR LANGUAGE DEVELOPMENT

S. H. HAYTYAN

GSU Lecturer

M. M. KHACHATRYAN

3rd Year Student

Department of the English Language and Literature of GSU

The article presents the importance of translation in foreign language teaching as an effective method for the language development. Teaching foreign language by means of translation solves incomparably many problems. While doing translations all the students meet different difficulties, solution of which triggers the development of a language itself. While doing translations the student should have a relation to different spheres of a language - from the lexicology to syntax. Frequent translations bring the creation of the new words, completing the word-stock, which, of course, is a productive method for the development of a language. Translations contribute to the activation of the passive vocabulary making the words to be used in speech. The more students translate, the more their speech is improved.

ПЕРЕВОД КАК ЭФФЕКТИВНОЕ СРЕДСТВО РАЗВИТИЯ ЯЗЫКА

С. А. АЙТЯН

Преподаватель ГГУ

М. М. ХАЧАТРЯН

Студентка 3-го курса отделения английского языка и литературы

Филологического факультета ГГУ

Статья подчеркивает важность перевода, как одного из эффективных средств развития речи, при обучении иностранному языку. С помощью перевода обучение иностранному языку становится более эффективным. При работе над переводами учащиеся сталкиваются с различными трудностями, решение которых само по себе приводит к развитию языка. Во время работы над переводом учащийся охватывает разные разделы языка: начиная с лексикологии и кончая синтаксисом. Очень часто переводы ведут к созданию новых слов, увеличению словарного запаса. Переводы способствуют активизации лексики, существующие в пассивном запасе слова начинают использоваться в речи. Чем больше учащиеся занимаются переводом, тем более совершенствуется их речь.